№5

Մենք ի վայր ենք

Տեղեկատվական թերթիկ

Օգոստոս 2008

Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» հասարակական կազմակերպություն

Կոտայքի մարզում խնդիրները շատ են

Հաշմանդամների իրավիճակի բարելավման հեռանկարներին վերաբերող քննարկումները «Ունիսոնը» այս անգամ կազմակերպեց Աբովյանում: Հանդիպմանը մասնակցում էին Կոտայքի մարզպետարանի, կրթական, առողջապահական, մշակութային հաստատությունների և տեղական ՀԿ-ների ներկայացուցիչներ:

Քննարկումները ծավալվեցին հաշմանդամների զբաղվածության մակարդակի բարձրացման, հասարակական և մշակութային ինտեգրման հիմնախնդիրների և դրանց լուծման արդյունավետ միջոցների վերաբերյալ: Կլոր սեղանի կազմակերպմանը և անցկացմանը հատկապես ակտիվ մասնակցություն ունեցավ «Սաթենիկ» բարեգործական հասարակական կազմակերպությունը: Միջոցառումը լուսաբանվեց «Կոտայք» մարզային թերթի և «Աբովյան» հեռուստաընկերության կողմից:

Հուսանք, որ բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ ջանքերով կլոր սեղանի ժամանակ հնչած առաջարկները կվերածվեն գործնական քայլերի:

Սիրելի՛ գյումրեցիներ

Երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը հրավիրում են «Փարոս» կամերային երգչախմբի համերգին, որը կկայանա սեպտեմբերի 28-ին ժամը 18[00]-ին Գյումրու Թատերական հրապարակում:

Բեթհովենի առեղծվածը

1822թ. Վիեննայում բեմադրում էին Լյուդվիգ վան Բեթհովենի «Ֆիդելիո» օպերան: Բեթհովենը ցանկացավ ինքը ղեկավարել նվագախմբի վերջին փորձը, սակայն ստեղծագործության առաջին համարներից պարզ դարձավ, որ հեղինակը ոչինչ չի լսում: Բնականաբար, փորձն ընդհատվեց...

Լսողության խնդիրները, որոնք Բեթհովենի մոտ ի հայտ եկան 28 տարեկանում, սկսեց նկատել շրջապատը: Խլությունը ստիպում էր նրան մեկուսանալ մարդկանցից, չնայած իրականում նա բարի և հմայիչ անձնավորություն էր: Թվում էր, թե խլությունը փակում է դեպի երաժշտություն տանող բոլոր ճանապարհները: Այնուամենայնիվ, Բեթհովենի գրեթե բոլոր ամենանշանակալի գործերը ստեղծվել են թույլ լսողության և այնուհետև բացարձակ խլության պայմաններում: Ավելին, կարելի է ենթադրել, որ առանց խլության չէր լինի Բեթհովենհանճարը: Նման ախտորոշման դեպքում («լաբիրինթոսային ծագում ունեցող խլություն») մարդիկ հաճախ լսում են հիասքանչ երաժշտություն, սակայն չեն կարողանում հիշել և վերարտադրել այն: Բեթհովենը արտակարգ հիշողություն ուներ: Բացի դրանից, նա տիրապետում էր երաժշտական մշակման մասնագիտական հմտություններին, ինչը թույլ տվեց նրան «լսվածը» վերածել անմահ գլուխգործոցների:

Հրապարակումն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի Օժանդակության Հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և Նիդեռլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Իրավաբանի անկյուն
Հարց և պատասխան

Ես 3-րդ խմբի հաշմանդամ եմ: Ծնողներս ամուսնալուծված են, և հայրս երկրորդ անգամ է ամուսնացել: Բնակարանը, որտեղ նա ապրում է երկրորդ կնոջ հետ, կտակել է նրան: Ստացվում է, որ ես բնակարանի նկատմամբ որևէ իրավունք չունեմ, քանի որ հաշվառված չեմ այնտեղ: Ի՞նչ խորհուրդ կտայիք:

Հ.Փիլոյան, 45 տ., ք. Սիսիան

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1194-րդ հոդվածի համաձայն, որն, ի դեպ, սահմանում է ժառանգության պարտադիր բաժնի իրավունքի պայմանները, պարտադիր բաժին է համարվում ժառանգի իրավունքը, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգելու այն բաժնի առնվազն կեսը, որը նրան կհասներ ըստ օրենքի ժառանգելու դեպքում:

Ժառանգության բացման ժամանակ պարտադիր բաժնի իրավունք ունեն ժառանգատուի անչափահաս երեխաները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված կամ 60 տարեկան դարձած ժառանգատուի երեխաները, ամուսինը և ծնողները: Պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում այն ամենը, ինչ նման բաժնի իրավունք ունեցող ժառանգը որևէ հիմքով ստանում է ժառանգությունից՝ ներառյալ նման ժառանգի օգտին սահմանված կտակային հանձնարարության արժեքը:

Այսինքն, դուք ձեր հոր բնակարանի նկատմամբ ունեք ժառանգության իրավունք, անկախ նրա կողմից կազմած կտակի բովանդակությունից:

Իզաբելլա Կարապետյան,
«Ունիսոն» ՀԿ իրավաբան

Մասնակցե՛ք մրցույթներին և հաղթե՛ք

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը և «Ունիսոն» հասարակական կազմակերպությունը ՀՀ-ում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շրջանակներում անցկացնում են **հաշմանդամ ստեղծագործողների ձեռքի աշխատանքների հանրապետական մրցույթ**:

Մրցույթին կարող են մասնակցել ցանկացած տեսակի հաշմանդամություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

Սահմանված են հետևյալ անվանակարգերը

1. **Գոբելեն և ասեղնագործություն**
2. **Գեղանկարչություն**
3. **Փորագրություն և խեցեգործություն**

Յուրաքանչյուր անվանակարգում սահմանված է 4 մրցանակ (մեկ գլխավոր, մեկ հատուկ մրցանակ «Երկրաշարժն իմ աչքերով» թեմայով և խրախուսական մրցանակներ):

Զուգահեռաբար «Ունիսոնը» անցկացնում է **16-40 տարեկան հաշմանդամ կանանց գեղեցկության ֆոտոմրցույթ**:

Երկու մրցույթների մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Ձեռքի աշխատանքները և գեղեցկության մրցույթի մասնակիցների լուսանկարներն ընդունվում են **մինչև սեպտեմբերի 24-ը**:

Տեղեկությունների համար զանգահարել (010) 52-21-70 հեռախոսահամարով:

Բջիջների հիշողության ֆենոմեն

Այսպես են անվանել ամերիկացի գիտնականները երևույթ, երբ մարդիկ դոնորական օրգանների պատվաստումից հետո ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր, որոնք հատուկ էին դոնորներին: Այս երևույթի առկայության մասին են վկայում բազմաթիվ դեպքեր:

37-ամյա Չերիլ Զոնսոնի խոսքերով, երիկամի պատվաստումից հետո նա նկատեց պահվածքի, վարքի, անգամ գեղարվեստական ճաշակի կտրուկ փոփոխություն. սիրավեպերի նկատմամբ սերը փոխարինվեց դասական գրականության ընթերցմամբ: Մասաչուսեթսի բնակչուհին, որը նախկինում վախենում էր բարձրությունից, վիրահատությունից հետո զբաղվեց լեռնագնացությամբ: Մի 7-ամյա աղջնակ, որին պատվաստել էին սպանված երեխայի սիրտը, սկսեց մղձավանջներ տեսնել, որտեղ նա մարդասպանի զոհ էր դառնում:

«Ունիսոն» հասարակական կազմակերպությունը
հաշմանդամներին անվճար տրամադրում է

- զբաղվածության կենտրոնի ծառայություններ (ռեզյումեի կազմում, հարցազրույցին նախապատրաստում և այլն)
- իրավաբանական խորհրդատվություն
- հոգեբանական աջակցություն

Անցկացվում են նաև կերպարվեստի պարապմունքներ:

52-21-70

Նախագիծն իրականացվում է Բաց Հասարակության Ինստիտուտի և Նիդերլանդների Կառավարության ֆինանսական միջոցներով

Ինտերնետը՝ կույր մարդկանց համար

Վաշինգտոնի համալսարանի գիտնականները մշակել են WebAnywhere անվանումը կրող ծրագիր, որը կույր մարդկանց թույլ կտա ցանկացած համակարգչից այցելել ինտերնետային կայքեր:

Պարզ գործողությունների կատարման համար (նորությունների ընթերցում, տեղեկատվության որոնում և էլեկտրոնային նամակագրություն) տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ օգտվում են հատուկ ծրագրերից՝ այսպես կոչված «էկրանային հաղորդավարներից»: Չնայած նման ծրագրերը լայն տարածում են ստացել, նրանց բոլորին միավորում է մեկ լուրջ թերություն. կոշտ դիսկի վրա ծրագրի տեղադրման անհրաժեշտություն: WebAnywhere-ը լրացնում է այդ բացը:

Կույր կամ վատ տեսնող մարդը, այցելելով http://wa.cs.washington.edu կայքը, ստեղնաշարի հրահանգների միջոցով հնարավորություն է ստանում օգտվել ցանկացած ինտերնետային կայքից, որի բոլոր տեքստերը բարձրաձայնում է «էկրանային հաղորդավարը»: Այսպիսով, ի տարբերություն նմանատիպ ծրագրերի, WebAnywhere-ը ակտիվանում է անմիջապես բրաուզերի պատուհանում:

Գլխավոր խմբագիր
Արմեն Ալավերդյան

Հրապարակումը պատրաստեցին
Դավիթ Բաբայան
Մարիաննա Չալիկյան
Իզաբելլա Կարապետյան

Հասցե՝ «Ունիսոն» ՀԿ, Երևան 0002, Դեմիրճյան 36
Հեռ./Ֆաքս՝ (010) 52-21-70
Վեբ-կայք՝ www.unison.am
էլ. փոստ՝ unison@unison.am